ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանի, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Քրիստիննե Գրիգորյանի և ՀՀ արդարադատության նախարարի օգնական Ներսես Զեյնալյանի՝ Նիդերլանդների Թագավորություն (Հաագա) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձինք՝ Ռուստամ Բադասյան, Քրիստիննե Գրիգորյան, Ներսես Զեյնալյան:

Գործուղված անձանց զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարար, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, ՀՀ արդարադատության նախարարի օգնական:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Նիդերլանդների Թագավորություն (այսուհետ՝ ՆԹ) (Հաագա), 2020թ. փետրվարի 4-ից 7-ը:

Հրավիրող կողմը՝ Եվրոջասթի նախագահ Լադիսլավ Համրան:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն Եվրոջասթի նախագահ Լադիսլավ Համրանի, Եվրոպոլի գործադիր տնօրեն Կատերին դե Բոլի, Արդարադատության միջազգային դատարանի գլխավոր քարտուղար Ֆիլիպ Գոտյեի, Նիդերլանդների Թագավորության արդարադատության և անվտանգության նախարար Ֆերդինանդ Խրապերհաուսի, Նիդերլանդների Թագավորության Հելսինկյան կոտմիտեի փորձագետների հետ հանդիպումներին:

Քննարկված թեմաները՝ Եվրոջասթի նախագահ Լադիսլավ Համրանի, Եվրոպոլի գործադիր տնօրեն Կատերին դե Բոլի, Արդարադատության միջազգային դատարանի գլխավոր քարտուղար Ֆիլիպ Գոտյեի, Նիդերլանդների Թագավորության արդարադատության և անվտանգության նախարար Ֆերդինանդ Խրապերհաուսի, Նիդերլանդների Թագավորության Հելսինկյան կոտմիտեի փորձագետների հետ հանդիպումների ընթացքում քննարկվել են փոխադարձ

հետաքրքրություն ներկայացնող, ինչպես նաև առկա համագործակցության խորացմանն առնչվող հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանը, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Քրիստիննե Գրիգորյանը, ՀՀ արդարադատության նախարարի օգնական Ներսես Ձեյնալյանը Եվրոջասթի նախագահ Լադիսլավ Համրանի հրավերով 2020թ. փետրվարի 4-ից 7-ը աշխատանքային այցով մեկնել են Նիդերլանդների Թագավորություն (Հաագա):

Ներկայացվում է կայացած հանդիպումների ընթացքում ձեռք բերված հիմնական պայմանավորվածություններն ու համագործակցության խորացման ուղիները:

- **Հանդիպում Եվրոջասթի նախագահի հետ**

Եվրոպական միության այս կառույցն անդամ պետությունների համար մշակում է իրավական փոխօգնության քաղաքականությունը, ինչպես նաև աջակցություն է ցուցաբերում կոնկրետ գործերի քննության հարցում (տարեկան քննում է 4000 գործ): Այն հանդիսանում է միասնական պլատֆորմ անդամ պետությունների կամ այլ երրորդ պետությունների կոնտակտային անձանց համար:

Եվրոջասթի գրասենյակում յուրաքանչյուր պետություն կարող է ունենալ կոնտակտային անձ՝ դատախազ կամ իրավապահ այլ մարմնի ներկայացուցիչ, ով առանց երկարատև դժվար գործընթացների կարող է մեկ այլ պետության կոնտակտային անձի հետ քննարկել իր պետության կողմից ներկայացված իրավական հարցումը, փոխանակել տեղեկատվություն, ինչպես նաև կատարել այլ գործողություններ:

ՀՀ-ում տեղի ունեցած հեղափոխությունից հետո ԵՄ կողմից առաջարկվել էր նշանակել կոնտակտային անձինք՝ արդարադատության նախարարությունից, դատախազությունից և ոստիկանությունից:

Արդարադատության նախարարի և Եվրոջասթի տնօրեն Լադիսլավ Համրանի միջև տեղի ունեցած հանդիպման ընթացքում Լ. Համրանը շեշտեց, որ վերջին երկու տարիների ընթացքում ՀՀ կողմից գրանցած առաջընթացը հիմք է հանդիսացել ՀՀ-ն Եվրոջասթի հետ համագործակցության առաջնահերթ պետությունների ցանկում ավելացնելու համար: Առաջնահերթ պետությունների ցանկում ընդգրկվելը հնարավորություն է ընձեռում հասանելիություն ձեռք բերել Եվրոջասթի հսկայական տվյալների և ապացույցների բազաներին, հեշտորեն համագործակցել անդամ պետությունների կամ այլ պետությունների հետ կազմակերպված հանցավորության դեմ պայքարի շրջանակներում:

Նկատի ունենալով, որ առաջնահերթ պետությունների ցանկում ընգրկվելու վերաբերյալ վերջնական որոշումն ընդունվում է Բրյուսելում Արդարադատության և անվտանգության հարցերով հանձնաժողովների կողմից, ապա այս համատեքստում անհրաժեշտ է ոչ միայն իրավասու գերատեսչությունների առավել ակտիվ աշխատանքը, այլ նաև քաղաքական հարթակներում այս հարցի բարձրացումը: Քաղաքական մասով անհրաժեշտ կլինի ԵՄ բարձրաստիճան ներկայացուցիչների, հանձնակատարների հետ հանդիպումների ընթացքում բարձրացնել այս հարցը: Եվրոջասթի հետ սերտ և արդյունավետ համագործակցությունը կարող է կարևոր հիմք հանդիսանալ ԵՄ-ի հետ վիզայի ազատականացման երկխոսությունը սկսելու գործընթացի համար:

Եվրոջասթի նախագահ Համրանի հետ բարեկամական կապ հաստատվեց և նախարար Բադասյանը Համրանին հրավիրեց Հայաստան՝ մասնակցելու աշնանը Երևանում կայանալիք կոռուպցիայի դեմ պայքարին նվիրված կոնֆերանսին:

- **Հանդիպում Եվրոպոլի գործադիր տնօրենի հետ**

Իրավապահ ոլորտի համագործակցության համար ստեղծված ԵՄ այս կառույցում աշխատում են 240 կոնտակտային անձինք ինչպես ԵՄ անդամ պետություններից, այնպես էլ երրորդ պետություններից: Այս կառույցը ըստ էության

կազմակերպված հանցավորության հետ կապված քրեական գործերի քննության յուրահատուկ կենտրոնական է:

Այս տարվա սկզբին Եվրոպոլը ՀՀ-ին ներկայացրել է աշխատանքային համագործակցության շրջանակ սահմանող իրավական փաստաթղթի նախագիծը: Ըստ էության, այս փաստաթղթի ստորագրմամբ ՀՀ համար հնարավորություն կստեղծվի հասանելություն ունենալ Եվրոպոլի բազմաթիվ ծառայություններին, ինչպես նաև ուղղակի և արագ կապ հաստատել 30-ից ավել պետությունների իրավապահ մարմինների ներկայացուցիչների հետ, իրականացնել կամ աջակցել կազմակերպված հանցավորության գործերի քննությանը: Բացի այս, Եվրոպոլը կարող է իրականացնել տարբեր բնույթի փորձաքննություններ, ֆինանսական աջակցություն տրամադրել նաև քննությունների ու հանդիպումների ընթացքում կոնտակտային անձանց ճանապարհածախսերի ու կեցության համար:

Եվրոպոլի գործադիր տնօրենի հետ նախարար Բադասյանը հստակ պայմանավորվածություն ձեռք բերեց, որ փաստաթղթի ներպետական համաձայնեցման գործընթացը հնարավորինս արագ կամփոփվի՝ նպատակ ունենալով արդեն աշնանը ստորագրել այն:

Պետք է նկատի ունենալ, որ այս համագործակցության շրջանակի հաջորդ փուլը, որը ենթադրում է անխոչընդոտ համագործակցություն և տվյալների փոխանակում ԵՄ անդամ և երրորդ պետությունների հետ, հանդիսանալու է համապարփակ համագործակցության համաձայնագրի կնքումը Եվրոպոլի հետ: Այս առումով ևս անհրաժեշտ կլինի ՀՀ բարձրաստիճան պաշտոնյաների կողմից Արդարադատության և սպառողների, ինչպես նաև Միգրացիայի և ներքին գործերի հարցերով հանձնակատարների հետ հանդիպումների ընթացքում բարձրացնել այս հարցը:

Եվրոպոլի հետ համագործակցությունը ևս կարևոր նախապայման կարող է հանդիսանալ ԵՄ հետ վիզայի ազատականացման երկխոսությունը սկսելու գործընթացի համար:

- **Հանդիպում ՆԹ արդարադատության և անվտանգության հարցերի նախարարի հետ**

Ըստ էության, սա անկախությունից ի վեր ՀՀ արդարադատության նախարարի առաջին այցն էր ՆԹ, ինչպես նաև առաջին հանդիպումը երկու երկրների արդարադատության նախարարների միջև:

Հանդիպմանը քննարկվել են երկու երկրների արդարադատության նախարարությունների առաջնահերթությունները, մասնավորապես՝ հայկական կողմի խնդրանքով ներկայացվել է հանրային-մասնավոր համագործակցության միջոցով քրեակատարողական հիմնարկների կառուցման նիդերլանդական փորձը:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել կիսվելու նիդերլանդական փորձով՝ ուղղորդելու հայ գործընկերներին գործընթացի իրականացման առանձնահատկությունների վերաբերյալ: Առանձին անդրադարձ է կատարվել նաև պրոբացիայի ոլորտի փորձառությանը:

Նախարար Խրապերհաուսը նաև առաջարկել է հայկական կողմին դիտարկել Նիդերլանդների կողմից առաջարկված մարդկության դեմ ուղղված և ռազմական հանցագործությունների հարցերով իրավական փոխօգնության կոնվենցիա մշակելու նախաձեռնությունը (ըստ նախաձեռնության շրջանակի նախնական բանավոր ներկայացման՝ մեծապես համընկնում է Հռոմի ստատուտի կարգավորման առարկայի հետ):

- **Հանդիպում ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի Գլխավոր քարտուղարի հետ**

Արդարադատության միջազգային դատարանի Գլխավոր քարտուղարի հետ հանդիպման բնույթը քաղաքավարական էր: Հանդիպման ընթացքում նախարար Բադասյանը կարևորել է Դատարանի իրավազորության վերաբերյալ հայ իրավաբանների ու հատկապես գիտական և ուսանողական հանրության առավել մեծ

իրազեկվածությունը: Նախարարը հետաքրքրվել է փորձի փոխանակման և վերապատրաստման ծրագրերի իրականացման հնարավորությունների մասին:

Գլխավոր քարտուղար Ֆիլիպ Գոտյեն ներկայացրել է դատարանի վարույթում գտնվող հիմնական գործերը, ինչպես նաև անդրադարձել դատարանի կողմից իրականացվող փորձնակության պրակտիկային:

- **Հանդիպում ՆԹ Հելսինկյան կոմիտեի փորձագետների հետ**

Հելսինկյան կոմիտեն ոչ կառավարական կազմակերպություն է: Այս կառույցի հիմնական ֆինանսավորողը ՆԹ արտաքին գործերի նախարարությունն է:

Վերջինիս խորհրդի անդամների հետ հանդիպման նպատակն էր ՀՀ արդարադատության ոլորտի բարեփոխումների օրակարգը փորձագիտական շրջանակներին ներկայացնելը, ինչպես նաև լսել վերջիններիս դիտարկումները օրակարգային հարցերի վերաբերյալ՝ դատական համակարգի բարեփոխումներ, պայքար կոռուպցիայի դեմ, քրեական արդարադատության բարեփոխումներ, քրեակատարողական ու պրոբացիոն ծառայությունների զարգացում և արդյունավետության ապահովում:

Այս կազամակերպության փորձագետները, նախապես ծանոթացած լինելով բարեփոխումների ոլորտային ռազմավարությունների հետ, ներկայացրել են իրենց դիտարկումները, ինչպես նաև ՆԹ փորձը տվյալ ոլորտներում:

ՀՀ արդարադատության նախարար

Ռուստամ Բադասյան

10.02.2020թ.